ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 26.05.2016 թ. նիստի

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Ա.Ղահրամանյանի

ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝ Վ.Մկրտչյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ՝ Հ.Հարությունյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Ա.Պողոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝ Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

քաղաքաշինության վարչության պետ՝ Կ.Դանիելյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի

պետ՝ Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության

Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝ Լ.Ալեքսանյանի

ՀՀ Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած համայնքների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.2016թ. մայիսի 12-ին,18-ին և 23-ին ուժեղ քամիների ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկտահարության հետևանքով ՀՀ Արմավիրի մարզի մի շարք համայնքներում գյուղատնտեսությանը հասցված վնասները գնահատելու միջոցառումների ընթացքի մասին

/ Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց,որ ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 23-ին կայացած նիստում

արդեն ներկայացվել էր 2016 թվականի մայիսի 12-ին, 18-ին և 23-ին քամու ուղեկցությամբ տեղի ունեցած տևական կարկտահարությունից տուժած մարզի ընդհանուր թվով 22 գյուղական համայնքների գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ՝ նախնական տվյալներով ամփոփ տեղեկատվությունը:Կատարված ուսումնասիրությունների (նույնպես նախնական) արդյունքներով պարզվել է,որ քամու ուղեկցությամբ տեղացած կարկուտից հիմնականում տուժել էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներքոհիշյալ գյուղական համայնքների Լուկաշինի,Նորավանի,Արգինայի,Բագարանի,Արմավիրի,Այգեշատի (Արմ.) , Տանձուտի,Արտաշարի,Արևիկի,Զարթոնքի,Բերքաշատի, Շենավանի, Գետաշենի, Նալբանդյանի, Նոր Արտագերսի, Արգավանդի, Ջանֆիդայի, Փշատավանի, Սարդարապատի, Արազափի,Երասխահունի և Եղեգնուտի գյուղական համայնքների հողագործները:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը միաժամանակ տեղեկատվության կարգով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին իրազեկ պահեց նաև,որ ստեղծված իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով 2016 թվականի մայիսի 24-ին ՀՀ Արմավիրի մարզ ժամանեցին Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ.Աբրահամյանը,ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դ.Լոքյանը,ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյանը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ս.Գալստյանը,որոնք այցելեցին կարկտահարությունից տուժած Արմավիրի մարզի Տանձուտ, Արևիկ, Եղեգնուտ և Արտաշար համայնքներ: Նրանք եղան կարկտահարված դաշտերում, ծանոթացան տեղացած կարկուտի պատճառած վնասներին, զրուցեցին գյուղացիների հետ, լսեցին նրանց մտահոգությունները ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Վարչապետը համապատասխան ոլորտի պատասխանատուներին հանձնարարեց Արմավիրի մարզում հնարավորինս սեղմ ժամկետներում տեղադրել լրացուցիչ հակակարկտային կայաններ: Գյուղացիների խնդրանքին ի պատասխան՝ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը խոստացավ ՀՀ Կենտրոնական բանկի հետ քննարկել կարկտահարությունից տուժած գյուղացիական տնտեսությունների՝ բանկերին ունեցած վարկերի մարման ժամկետների հետաձգման հարցը:Կառավարության ղեկավարը պատասխանեց նաև բնակիչներին հետաքրքրող մի շարք հարցերի, որոնք վերաբերել են գյուղատնտեսական աշխատանքների ընթացքին, մթերումների կազմակերպմանը, համայնքների ենթակառուցվածքներին և այլն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետն իր խոսքում հավելեց նաև,որ սահմանված ընթացակարգով կարկտահարության

վերաբերյալ համապատասխան տեղեկատվություններ են ներկայացվել ինչպես ՀՀ գյուղատնտեսության,այնպես էլ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ:Այսպես,24.05.2016թ.N 01/05/1780-16 գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարին հայտնվել է,որ նախնական տվյալներով տեղացած կարկուտի հետևանքով վնասվել է մարզի շուրջ 3750 հեկտար հողատարածությունները՝ 30-80 տոկոսով:Կարկտահարությունից հիմնականում վնասվել են հետևյալ մշակաբույսերը՝

ա/ խաղող - 737,3 հա

բ/ պտուղ - 1074,5 հա

գ/բանջարեղեն – 1446 հա

դ/ բոստան - 493 հա

Պատճառված նյութական վնասի չափը մոտավոր(նույնպես նախնական) հաշվարկներով կազմում է շուրջ 7,83 մլրդ դրամ:

Միաժամանակ հայտնվել է նաև, որ կարկտահարության ժամանակ գործարկված 105 հակակարկտային կայաններից 48-ը չեն աշխատել կապի բացակայության պատճառով:

Իսկ Կարկտահարության հասցրած վնասները մեղմելու և ՀՀ վարչապետի վերոհիշյալ համայնքներ 24.05.2016թ. կատարած այցելության ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումն ապահովելու նպատակով 25.05.2016թ.N 01/05/1784-16 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին առաջարկվել է՝

1.Տանձուտ համայնքում կառուցել 5 հակակարկտային կայան և մանկապարտեզի վերանորոգման նպատակով հատկացնել 50մլն դրամ,

2. Արևիկ համայնքում կառուցել 2 հակակարկտային կայան և մանկապարտեզի վերանորոգման նպատակով նախագծային փաստաթղթեր ձեռք բերելու համար հատկացնել 3 մլն դրամ,

3. Եղեգնուտ համայնքում կառուցել 3 հակակարկտային կայան,

4.Արտաշար համայնքում կառուցել 2 հակակարկտային կայան և համայնքին տրամադրել ՄՏ3-82 մակնիշի գյուղատնտեսական տրակտոր,

5. Այգեշատ /Արմ./ համայնքում ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգման նպատակով հատկացնել 1500 հատ LR-80 տեսակի երկաթբետոնե կիսախողովակներ,

6 .Արգինա համայնքում կառուցել 2 հակակարկտային կայաններ,

7. Փարաքար համայնքի հիմնական դպրոցի տանիքի վերանորոգման համար հատկացնել 3 մլն դրամ:

Վերջում ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը անհրաժեշտ համարեց արագացնել և սեղմ ժամկետում ավարտել մարզի վերը նշված համայնքներում կարկտահարության հետևանքով գյուղատնտեսությանը հասցված վնասների անհատական գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզային հանձնաժողով՝քննարկման և համապատասխան ընթացք տալու համար:

Հանձնաժողովը որոշում է՝

1.Առաջարկել 2016թ. մայիսի 12-ին,18-ին և 23-ին քամիների ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարությունից տուժած

համայնքների ղեկավարներին,սերտորեն համագործակցելով ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ՝

ա/ համայնքային հանձնաժողովների ակտերն ու տեղեկատվական նյութերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել մշակված և տրամադրված ձևաչափերին համապատասխան,

բ/սեղմ ժամկետում ավարտել մարզի նշված ընդհանուր թվով 22 համայնքներում ուժեղ քամիների ուղեկցությամբ տեղի ունեցած կարկտահարության պատճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից համապատասխան ձևաչափերով կազմված ակտերն ու տեղեկատվական նյութերն ուղարկել մարզային հանձնաժողով՝ քննարկելու և համաձայնեցված ակտերն ու տեղեկատվական նյութերը համապատասխան մարմիններ ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Դ.Դավթյան

ՏԵՂԵԿԱՆՔ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ ____ Ի ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ _____ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՏԵՂԱՅԱԾ ԿԱՐՏՈՒՏԻ ՀԵՏՑՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԸՆԴԱՄԵՆԸ ՎՆԱՍՎԱԾ ՏԱՐԱԾՔ /հա/	ԱՅԴ ԹՎՈՒՄ								ՎԵՐՑՐԱԾ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
			ԽԱՂՈՂ		ՊՏՈՒՂ		ԲԱՆՋԱՐԵՂԵՆ		ԲՈՍՏԱՆ		
			ՏԱՐԱԾՔԸ /հա/	ՎՆԱՍՎԱ-ԾՈՒԹՅՈՒՆԸ %	ՏԱՐԱԾՔԸ /հա/	ՎՆԱՍՎԱ-ԾՈՒԹՅՈՒՆԸ %	ՏԱՐԱԾՔԸ /հա/	ՎՆԱՍՎԱ-ԾՈՒԹՅՈՒՆԸ %	ՏԱՐԱԾՔԸ /հա/	ՎՆԱՍՎԱ-ԾՈՒԹՅՈՒՆԸ %	
1											
2											
3											
4											
5											
	ԸՆԴԱՄԵՆԸ										

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ՝ 1.

2.

3.

4.

5.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ _____